

ԾՐԱԳԻՐ

«ՀՈԳԵԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԻ

Մայիս 24 – հունիս 21, հունիս 28 – հուլիս 26, սեպտեմբեր 6 – հոկտեմբեր 4,
նոյեմբեր 15 – դեկտեմբեր 13, 2019թ., հունվար 17 – փետրվար 14, 2020թ.,
(յուրաքանչյուր ուրբաթ)
ք. Երևան, («ՀԱՊԱԿ» ՓԲԸ)

ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ

Օր 1	
12:00-12:30	Մասնակիցների գրանցում
12:30-14:30	Սեմինարի (դասախոսության) ընդհանուր ներկայացում: Հոգեկան առողջության և հոգեկան խանգարման հիմնահարցը ա) Հոգեկան առողջության չափանիշները ըստ ԱՀԿ-ի բ) Հոգեկան խանգարման տեսակները • հոգեգարություն (փսիխոզ) • նևրոզ • անձի շեղումներ • սահմանային վիճակներ գ) Ընդհանուր հոգեախտաբանություն • կոգնիտիվ գործընթացների խանգարումներ • հուզականային ոլորտի խանգարումներ դ) Հոգեբուժական հետազոտման մեթոդները՝ հոգեկան վիճակի նկարագրում
14:30-14:45	Սուրճի ընդմիջում
14:45-16:45	Գործնական մաս Խնամառուի հետազոտում ա) Անամնեզատիկ տվյալների հավաքում բ) Հոգեկան վիճակի նկարագրություն Բժիշկների հսկողությամբ մասնակիցները կշփվեն բաժանմունքի համապատասխան խնամառուների հետ: Գործնականում կտեսնեն հոգեբուժական ստացիոնարի պայմանները, կծանոթանան բաժանմունքի կարգուկանոնին և կենցաղին: Մասնակիցները փոքր խմբերով (2-3 հոգի) կանցկացնեն հոգեբուժական զրույց մեկ խնամառուի հետ:

	Յուրաքանչյուրը գրավոր ձևով կներկայացնի խնամառուի հոգեկան վիճակի նկարագրությունը: Վերջում կամփոփվեն խնամառուի հոգեբուժական նկարագրի միջոցով եզրակացություն կատարելու և վկայարկելու մեթոդները
Օր 2	
12:00-14:00	Շիզոֆրենիա ա) Ախտածնությունը և հոգեախտածնությունը բ) Ախտորոշման փուլայնությունը գ) Շիզոֆրենիայի տեսակները, դրսևորումները (կլինիկական) դ) Հոգեվերլուծական տեսակետներ ե) Շիզոտիպային և զառանցական խանգարումներ զ) Դեղորայքային և հոգեթերապևտիկ բուժման սկզբունքները
14:00-14:15	Սուրճի ընդմիջում
14:15-16:15	Գործնական մաս Շիզոֆրենիայով տառապող խնամառուի հետ շփման, հաղորդակցման, հոգեբանական և հոգեթերապևտիկ աշխատանքի առանձնահատկությունները: Շիզոֆրենային դեմնեցիայով տառապող խնամառուի խնամքը և պահպանողական բուժումը: • Զրույց շիզոֆրենիայով տառապող խնամառուի հետ • Խնամառուի ոչ վերբալ դրսևորումների (վարք, դիմախաղ, ժեստեր) ուսումնասիրություն և վերլուծություններ Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների քննարկում
Օր 3	
12:00-14:00	Աֆեկտիվ խանգարումներ ա) Երկբևեռ աֆեկտիվ խանգարում բ) Դեպրեսիա, դրսևորումները գ) Հոգեախտածնության և ախտանիշների հոգեվերլուծական տեսակետները դ) Մանիակալ էպիզոդ ե) Հոգեթերապևտիկ մոտեցումները
14:00-14:15	Սուրճի ընդմիջում
14:15-16:15	Գործնական մաս Աֆեկտիվ խանգարումով խնամառուների հետ շփվելու և հաղորդակցվելու առանձնահատկությունները, խնամառուի զննում և հոգեկան վիճակի նկարագրություն • Աֆեկտիվ խանգարումով խնամառուների հետ փոքր խմբերով հաղորդակցում և հոգեբուժական զննում Վերլուծություն և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների քննարկում
Օր 4	
12:00-14:00	Էպիլեպսիա: Ակտիվիզմ և թմրամոլություն ա) Էպիլեպտիկ նոպայի առաջին բուժօգնությունը բ) Էպիլեպտիկ անձնային գծեր գ) Ակտիվիզմի և թմրամոլության սոցիալ-հոգեբանական նախադրյալները

	(պատճառները) դ) Հիմնախնդրի հոգեվերլուծական մոտեցումները
14:00-14:15	Սուրճի ընդմիջում
14:15-16:15	Գործնական մաս Խնամառուի հետ հաղորդակցման և էպիլեպսիայով հիվանդի հետ հոգեբանական և հոգեթերապևտիկ աշխատանքի առանձնահատկությունները: ա) Ակոհողիզմով տառապող հիվանդների հետ շփման և հոգեթերապիայի առանձնահատկությունները բ) Թմրամոլի հետ աշխատելու հոգեբանական առանձնահատկությունները Մասնակիցների փոքր խմբերով աշխատանք համապատասխան խնամառուների հետ Արդյունքների վերլուծություն և ամփոփում
Օր 5	
12:00-14:00	Ներոգներ ա) Ներոգների հոգեախտաճնությունը բ) Հոգեբանական պաշտպանական մեխանիզմները տարբեր ներոգների ժամանակ գ) Ներոգների հոգեվերլուծական բուժումը
14:00-14:15	Սուրճի ընդմիջում
14:15-16:15	Գործնական սեմինար. Հոգեվերլուծական հոգեթերապիայի տեխնիկաներ, տրանսֆերը ներոգների ժամանակ: Գործնական ունակությունների ձեռքբերում, աշխատանք տրանսֆերի և կոնտրտրանսֆերի հետ Հոգեվերլուծական հոգեթերապիայի դերային ցուցադրություն մասնակիցների միջոցով Ներոտիկ պաշտպանական մեխանիզմների քննարկում

Թիրախային լսարան՝ հոգեբույժներ, հոգեթերապևտներ, կլինիկական հոգեբաններ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 30-40 հոգի:

Սեմինարավար՝

Գագիկ Թադևոսյան - ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տղամարդկանց ընդհանուր հոգեբուժական բաժանմունքի վարիչ